ՀՀ ԳԱԱ-ում քննարկվեցին ակադեմիական համակարգի բարեփոխումները

Ս/թ փետրվարի 1-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ քննարկում՝ նվիրված ակադեմիական համակարգի բարեփոխումներին: Հանդիպմանը մասնակցեցին ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը, ՀՀ ԳԱԱ փոխնախագահ Հրանտ Մաթևոսյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Արթուր Իշխանյանը, Մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ու Ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքի գիտահետազոտական ինստիտուտների տնօրենները:

Նշվեց, որ ՀՀ ԳԱԱ-ն մեծ ներուժով բազմապրոֆիլ համակարգ է, և պետք են այնպիսի ծրագրեր, որոնք կներգրավեն այդ ամբողջ ներուժը: Շեշտվեց, որ, լինելով գիտության և գիտական մշակույթի կրողը, ՀՀ ԳԱԱ-ն պետք է ունենա հավասարակշռված մոտեցում ինչպես հիմնարար, այնպես էլ կիրառական գիտության հանդեպ: «Մեզ պետք է գիտություն, որը կտա հստակ մշակումներ: Մենք պետք է առաջարկենք ներդրումային և նպատակային ծրագրեր, որոնց մի մասը պետք է լինեն կիրառական բնույթի», - ասաց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը:

Այս ուղղությամբ հիմնական խնդիրներից են գիտական արտադրանքի սերտիֆիկացումը, գիտաարտադրական համալիրի ստեղծումը: Առաջարկվեց ստեղծել ակադեմիական կլաստեր, որը կարող է դառնալ եվրոպական նման համակարգի մաս: Նշվեց գիտության մեթոդների անհրաժեշտության մասին, որոնք կապահովեն գիտության կապն այլ ոլորտների հետ: Գիտության և կրթության կապի ամրապնդման նպատակով առաջարկվեց ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնը վերածել հետազոտական համալսարանի:

Ակադեմիկոս Աշոտ Սաղյանը գիտահետազոտական ինստիտուտների տնօրեններին կոչ արեց հանդես գալ հավակնոտ ծրագրերով: Նա նշեց, որ հարկավոր է երիտասարդացնել ԳԱԱ ղեկավարությունը, խթանել երիտասարդների ներգրավվածությունն ակադեմիական կառավարման համակարգում:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Արթուր Իշխանյանը նշեց. «Մենք պետք է լինենք այն ուղեղային վերլուծական կենտրոնը, որը կառաջարկի մեծ ծրագրեր, որոնք պետք են երկրին և մեզանից յուրաքանչյուրին: Այդօրինակ ծրագրերն ունեն մեծ մոբիլիզացիոն ներուժ»: